

ՀԱՆԳԻՍՏ
ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ՄԱՄԻԿՈՆ ՔԱՀԱՆԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ
(1892—1974)

1974 թվականի հունվարի 19-ին Թբիլիսիում, 82 տարեկան հասակում, վախճանվեց տ. Մամիկոն քհն. Աբրահամյանը:

Հանգուցյալը ծնվել է 1892 թվականին



Ախալքալաքի շրջանի Ագանա գյուղում, գյուղացու ընտանիքում:

Սկզբնական կրթությունը ստացել է տեղի ծխական դպրոցում և մանուկ հասակից որպես դպիր ծառայել գյուղի եկեղեցում:

1912—1915 թվականներին հետևել է Ներսիսյան դպրոցի դասավանդություններին և, հաջողությամբ քննությունները հանձնելով, ստացել ավարտական վկայական:

1916 թվականին Թբիլիսիի վանքի եկեղեցում ձեռնադրվում է քահանա՝ ձեռամբ մագիստրոս Մեսրոպ արքեպիսկոպոսի, և հոգևոր հովվության հրավիրվում իր ծննդավայրը՝ Ագանա:

1918 թվականին ընտանիքով տեղափոխվում է Թբիլիսի և նշանակվում Ջիգրաշեն եկեղեցում որպես ժամասաց քահանա: Ապա քահանայագործում է մինչև 1972 թվականը վրահայոց թեմի եկեղեցիներում:

1972 թվականին անցնում է թոշակի:

1974 թվականի հունվարի 22-ին Թբիլիսիի ս. Էջմիածին եկեղեցում կատարվում է հանգուցյալի վերջին օծման կարգը՝ ձեռամբ վրահայոց թեմի առաջնորդ տ. Գևորգ եպս. Սերայդարյանի:

Այնուհետև առաջնորդ սրբազանը նախագահում է հանգուցյալի վերջին օծման և թաղման արարողությանը և դամբանական խոսում հանգուցյալի կյանքի և եկեղեցական գործունեության մասին:

Հանգի՜ստ տ. Մամիկոն քհն. Աբրահամյանի ոսկորներին: